

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 89-2.3-47)

Մշակում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտում փոխկապակցումը կարգավորող կանոնակարգերը, մշակում է վերջնակետային սարքավորումների օգտագործման և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերին դրանց միացումը կարգավորող կանոնակարգերը, ոչ կառավարական ռադիո կանչերի նշանների հաղորդման ընթացակարգերը, մասնակցում է ռադիոհաձախականությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների և համարային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու դրանց արդյունավետ կառավարմանը, մասնակցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտի լիցենզավորված անձանց միջև առաջացած տարաձայնությունների, բաժանորդների հարցադրումների և բողոքների քննարկումներին, տալիս է պարզաբանումներ և առաջարկություններ, մասնակցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտում լիցենզավորված անձանց տարածքում անցկացվող՝ նրանց տրված լիցենզիաների, թույլտվությունների պայմանների կատարման մոնիթորինգին, կատարում է վերլուծություններ և ներկայացնում հաշվետվություն, մասնակցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտ լիցենզիաների, թույլտվությունների հայտ ներկայացրած անձանց փաստաթղթերում բերված տեխնիկական տեղեկատվության և տվյալների վերլուծությանը և համապատասխան եզրակացությունների և առաջարկությունների ներկայացմանը, մասնակցում է Հանձնաժողովի փաստաթղթերի մշակմանը՝ տեխնիկական խնդիրների մասով, պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից մշակված օրենքների ու այլ իրավական ակտերի քննարկմանը և կարծիքների ներկայացմանը, իր լիազորությունների շրջանակում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:

2. Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ կամ ռադիոտեխնիկա կամ կապի ցանցեր և կոմուտացիայի (փոխարկման) համակարգեր կամ բազմաձյուղ հեռուստակապային համակարգեր կամ ռադիոէլեկտրոնային համակարգեր կամ կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում կամ հաշվողական մեքենաներ, համալիրներ և ցանցեր կամ տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ եւ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան եւ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

3. Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը:

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝

«17» «հոկտեմբերի» 2018թ

5. Աշխատավարձի չափը՝

Երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը (212309) դրամի չափով:

6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝

7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին, մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի, անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10⁰⁰-ից մինչև 12³⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ (Երևան, Մարյան22, հեռ. 52-53-40-108,118):